

ՕՐՄԱՆՅԱՆ ԵՎ ԻՐ ԺԱՄԱՆԱԿԸ*

Գ. ՀԱՄԻԴԻ ԹԱԹԻՆ ՆԵՐՔԵՎ

1. ՕՐՄԱՆՅԱՆ ՊՈԼՍՈ ՊԱՏՐԻԱՐՔ

Համիդի թաթին ներքև:

Այսպես խորագրեցինք 12 տարիներու այն մոալ շրջանը, զոր Օրմանյան անցուց պատրիարքության փշոտ Աթոռին վրա, որովհետև ամենն զարհուրելի տարիներն էին անոնք Համիդի տիրապետության:

Զարհուրելի տարիներ հայ ժողովուրդին համար նախ: Շրջան մըն է, երբ սարսափը կտիրե մարդոց հոգիներուն. արյունը քամված երկու շարդերու մեջ, ընկճված հոգեպես և հոսախար իր երազներուն մեջ, որոնցմով ովարդված էր թեուլիննեն ի վեր, հայ ժողովուրդը քաշություն չունի այլև հուսալու ելքոպան, խցած իր խղճմտանքը մարտիրոսագրության առջև այս փոքրիկ ժողովուրդին, մոռցած իր հանդիսավոր խոստումներն անգամ, դահիճներուն կժպտի: Իսկ մեծ դահիճը, ինքը, իր արբանյակներով, կհեգնե իր որդեն այդ նենդ ելքոպան, ու պատրվակ կորսա, որպեսզի անգամ մըն ալ շողան յաթաղանները: Հայ ժողովուրդը, կծկուած իր հոգերուն մեջ, վաղվան նայելու ուժը չունի, որովհետև չի գիտեր, թե ի՞նչ պիտի բերե իրեն վաղվան այդ օրը:

Զարհուրելի տարիներ Օրմանյանի համար ալ: Պատրիարքությունը անգամ մը և կհեռացնե զինք իր բուն կոշումնեն, և այս անգամ, ավաղ՝ վերջնապես: Ան այս պիտի վերադառն իր նախասիրած ասպարեզին, որ ուսուցչությունն էր: Արմաշը իր վերջին բախսավորությունն էր եղեր, ուր կըցեր էր կառչած մնալ յոթը տարի իր այդ սիրած գիրքերուն, ուսուցչական այնքան պաշտած ամբիոնին: Հիմա արդեն նոր հոգեր են, որ իր ոտքերուն պիտի պլավին ու թույլ պիտի շտան շնչել:

Օրմանյան խորթ շրջան մը կմտնեն: Պոլս պատրիարքությունը անգամ մը և կհեռացնե զինք իր բուն կոշումնեն, և այս անգամ, ավաղ՝ վերջնապես: Ան այս պիտի վերադառն իր նախասիրած ասպարեզին, որ ուսուցչությունն էր: Արմաշը իր վերջին բախսավորությունն էր եղեր, ուր կըցեր էր կառչած մնալ յոթը տարի իր այդ սիրած գիրքերուն, ուսուցչական այնքան պաշտած ամբիոնին: Հիմա արդեն նոր հոգեր են, որ իր ոտքերուն պիտի պլավին ու թույլ պիտի շտան շնչել:

* Շարունակված «Եղմիածին» ամսագրի 1961 թվականի մայիս-հունիս և դեկտեմբեր:

դին դեպքերը անաշառ զննողի մը համար դժվար չէր Օրմանյանի դերը զննել այդ անցքերուն մեջ և հանգիլ վերջնական եղակացությանց: Դժվար պիտի ըլլա նույնպես զննության բովեն անցնել վերջին տասնամյակը անոր կյանքին, և նժարը զնել անոր մտքի վաստակը: Բայց այդպես չեն իր պատրիարքության տասներկու տարիները: Որքան ալ մարդ ուզե անաշառ ըլլա ու վեր կանգնիլ ամեն նախապաշտումն, և դատել անոր բովանդակ գործունեությունը այդ շրջանին մեջ, միշտ կետեր կմնան, որոնց վրային անփությամբ անցնիլը հնարավոր չէ:

Պոլսո Պատրիարքական Աթոռը երրեք չէր անցած դժնդակ տագնապե մը, որպիսին էր 1896 հոկտեմբեր 31/12 նոյեմբերին, այդ

Օմանյան դրամատան գրավումը և Սամաթի դեպքը, որոնք տեղի ունեցեր էին օգոստոս 14-ին և ջարդը, որ հաշորդեր էր անոնց, կազմալուծեր էին նաև կյանքը պահային շրջանակներ ներս: Սարսափը պատեր էր ամբողջ քաղաքը, և ոչ ոքի մաքեն Ազգը կանցներ այդ պահուն: Ամեն ոք իր սեփական մորթի մասին կմտածեր:

Ազգը իսկապես գլուխ շուներ այդ օրերուն, եթե գլուխ չհաշվենք տիրահնչակ այն եկեղեցականը, որ Բարթողիմենու Զամիլյան կիշչվեր և որ բերված էր Պատրիարքարան, իբրև տեղապահ, և առժամանակ Վարդապետի մուտքամբ: որ կազմված էր իր կողքին Հովհաննես նուրյանի գլխավորությամբ, Աստիք էին այն օրվան հայ վարիչները, որ եկեր էին իբրև թե իզմիրլանի և իր շրջանի մեղքը քավելու, ու Սուլթանին ալ շնչալու, թե հայն է մեղավոր շարդերուն մեջ, որոնց գոհ գնաց:

Եվ սակայն պետք էր մեկը գար Ազգին գումար:

Ո՞վ կհամարձակեր սակայն տեր կանգնիլ հայ ժողովուրդին այդ դժնդակ օրերուն, և ո՞վ էր, որ պիտի համարձակեր Ազգին գլուխը բերել այդ հանդուզն մարդու: Բարթողիմենուն էր միայն, որ կոնակը Ցըլդրզին տված և խրախուսված անոր արքանյակներն, կիորդեր ամեն գինով գալ նստիլ Պատրիարքական Աթոռը ու Համիլը հաշտեցնել Ազգին հետ՝ ճակատը քսած գահուն ոտքերուն:

Եվ ահա մարդ մը ասպարեզ եկավ այդ ճակատագրական պահուն: Հարություն փաշա Տատյան էր: Ան էր, որ տեր կանգնեցավ Ազգին, և ան էր, որ փորձեց ելք մը գտնել: Մոտեն տեղյակ ամպերուն, որոնք կշարունակեին հայ ժողովուրդի գլխուն կու-

տակված մնալ, կզար, թե ինչքան աղետալի կը լլար, եթե Բարթողիմենու մը գար Ազգին գլուխը: Կոթնած հեղինակության վրա, զոր իրեն շահեցուցած էին հսուն տարվան իր ծառայությունները երկրին, փորձեց թումբ կանգնել ամոթալի անդունդին առջև, որուն մեջ կուտեին գլորել Ազգը: Թմրած կարծվող հայն էր, որ կարթննար հանկարծ ծերունի դիվանագետին մեջ:

Պատրիարք մը ընտրել պետք էր: Եվ Արթին փաշա աղոր ձգտեցավ ամենեն առաջ, որպեսզի Ազգը առանց ղեկի շմար դժնդակ այս վայրկաններուն:

Ոգեկուելով այդ օրերը, Օրմանյան կգրե, «Երբ մեկ կողմե ահեղ տագնապ կտիրեր, մյուս կողմեն պատրիարքական ընտրության գործունեությունը ձեռք առնված էր, և երկու հակառակ ուղղություններ իրարու զեմ կմրցեին: Զամիլյան տեղապահ յուր բոլոր միջոցներով պատրիարք ընտրվելու կաշշատեր. մեկուն կիսուտանար, մյուսը կահարեկեր՝ կառավարական շրջանակին մեջ վայելած համակրության վստահելով, և գրեթե յուր հաշողությունը ապահոված կկարծեր: Մյուս կողմեն Տատյան Հարություն փաշա, արքունյաց մեջ ունեցած համարձակութենեն օգտվելով, Զամիլյանի տիրապետությունը վերջացնել և պատրիարք ընտրվելը խափանել կաշխատեր, չկրնալով հանդուրժել, որ Ազգին ղեկը այնպիսի մեկուն մը ձեռքը մնաան⁷¹:

Ազգը գլուխով մը օժտելու համար Ազգային ժողովը նիստի պետք էր հրավիրել նախ:

Բայց դյուրին չեղակ Համիդի հավանությունը առնել Ազգային ժողովը նիստի հրավիրելու համար: Արթին փաշայի կորուլը պետք էր որ կարենար հաղթել Համիդի համառության: Եվ սակայն Համիդ իր անդրդպելի պայմանն ուներ իր հաճությունը շնորհելու համար. պետք էր նախ Հայոց Ազգային Սահմանադրությունը փոխել: Արթին փաշա հնարամտությունն ունեցավ խոստանալու այդ վերաբնությունը, բայց անհնար ցույց տվավ այդ բանին ձեռնարկել պատրիարքը ընտրել առաջ, բանի որ Սահմանադրության փոփոխությունը չէր կրնար ըլլալ քանի Ազգը իր պետք շուներ: Համիդը այդ բանին հաճեցնել բացառիկ հաղթանակ մըն էր այն օրերուն համար:

Պատրիարքի ընտրության ձեռնարկվելի առաջ անհրաժեշտ էին սակայն Սահմանադրության պահանջած ձևակերպությունները: Եկեղեցական համագումարը ընտրելիներու ցանկ մը պետք էր պատրաստեր նախ, ու

Հետո Ազգային Կեդրոնական Վարչությունը հնգանոն էր ցանկը:
Եկեղեցական համագումարը, հավաքված ուկտեմբեր 20-ին, պատրիարքության հարմար եպիսկոպոսներու ցանկը կազմեց արդարեւ որում մեջ յոթներորդն էր միայն Օրդանյան, մինչ Դիմաքսյան ցանկին գլուխը կուգար:

Կմնար Ազգային Վարչության Կրոնական և Քաղաքական ժողովներն ընտրել:

Ազգային ժողովը, նիստի հրավիրված չոկտեմբեր 31/12 նոյեմբերին, այդ գործն էր որ գումար հանեց, վերջ տալով այսպես նուրյան վարչության, որ կըքանար անփառունակ էջ մը ձգելով Պոլսու ազգային տարեգությանց մեջ: Նոր կրոնական ժողովին իրը անդամ Օրմանյանն ալ ընտրված էր 57 քվարկուներեն 47-ին քվեով: Քաղաքական ժողովի նոր անդամներուն մեջ կային շատերը այն օրերու հրեական գլուխն ունենալով Հարության փաշա Տատյանը: Ընտրված էին, օրինակ, Ստեփան փաշա Ասլանյան, Գարբիել Նորատունյան, Տիգրան Յուսուֆյան, էլիաս Զայան, Զարեհ Տիլաբերյան, Գրիգոր Խորյան, Միհրան Սեթյան և այլն, «ամենն ալ ծանոթ և ողջամիտ անձնագրություններ», կըս Օրմանյան:

Ու հանկարծ սկսակ խոսվի Օրմանյանի անունը:

Պոլսու մեջ իր ներկայությունը 1896-ի աշնան կոչված էր իրեն համար ճակատագրական ըլլալ արդարաւ երկու տիրահոչակ դեմքերը, որոնք Ազգին զեկը ձեռք առեր էին իդմիրլյանի անկումեն հետո, Բարթողիմենու և նուրյան, իրենց առաջին գործն ըրեր էին, ի միջի այլոց, քանդակ Արմաշը, որ իրենց աշխին փուշն էր: Օրմանյան, ինչպես Դուրյանը, ստիպված էին հետևաբար մենակի Արմաշեն, հույս շունենալով ալ թե երբեքց դպրելանքը կրաչի: Օրմանյան կըսի, թե նույնիսկ կպատրաստվեր Եփատոս երթար:

Ու ճիշտ այդ օրերուն սկսակ փնտովի պատրիարքու մը: Միակ թեկնածուն, այսինքն միակ տենչացողը այդ պաշտոնին, Բարթողիմենուն էր, բայց ամրող Ազգը կնողկար անկե: Մյուս եպիսկոպոսներեն ոչ մեկը քաջությունն ուներ թեկնածու ներկայանալու: Որքան ալ Աթոռը հրապուրի էր, բայց դժնակ էր պահը, խաղաղ սրտով քաղմելու համար անոր վրա:

Ամենքը կսպասեին ակնդետ, թե նոր Քաղաքական ժողովը ինչպես պիտի կազմ ընտրելիներու ցանկը:

Քաղաքական ժողովին կազմած հնգանուն ցանկը սակայն անակնակալ մը շեղավ: Օրմանյան կգտնվեր ցանկին գլուխը նշան:

Էր, թե պատրաստություններ տեսնված էին մութին մեց: Մյուս չորսերն էին Բարթողիմենու Զամիլյան, Խորեն Մխիթարյան, Մտեփանոս Հովհաննելյան և Մամբրե Մարկոսյան: Քաղաքական ժողովը կթվեր հատուկ կերպով զանց ըրած ըլլալ կարգ մը անուններ:

Օրմանյանը լսենք այդ առթիվ հիմա: «Մելքիսեդեկ Սուրատայանի օտարաճպատակ ծնունդը, Գրիգորիս Հովհաննելյանի նվազ կարողությունը, Հայակ Դիմաքսյանի կենցաղին խոսված ըլլալը, Պետրոս Թամիզյանի անկյալ վիճակը, ուրիշներու կասկածելի նկատվիլը հետզհետե իրենց լստրելիությունը զանց ընել տված էր, և իմ վրաս գոյացած համամտության ուահաճորդներ հղած էին Գարբիել Նորատունկյան և Տիգրան Յուսուփյան, և նույնիսկ Արիկ Ունցյան իր բանտին մեջին: Տատյան դրվագարություն չէր ցուցուցած արդեն զիս ճանչացած ըլլալով, և Արդուկ Համբիդ կայսրեն ալ հավանություն ստացած ըլլալով որեւէ ուզածնին ընտրելու, որ թո՛ղ յուր Ազգը սիրե, բայց իրեն դեմ սուր քաշեն, բացատրություն մը, որով իզմիրլյանի մասին կազմած ըմբռումը կհայտներ»⁷²:

Օրմանյան իրականին մեջ միակ անձն էր, որուն վրա կրնային միանալ քվեները: Վըստահ էին բոլորը անոր ճարտարության վրա և ապահով, որ ան բավական հայրենասեր էր, շղավելու համար Ազգին, և բավական ալ խորհմ, որպեսզի Համբիդին շգավել: Մեկն էր, որ ապիտի սիրեր իր Ազգը, բայց Համբիդին դեմ սուր պիտի շքաշեր»:

Պատրիարքի ընտրությունը՝ շուշացավ, անտեղի ունեցավ 1896 նոյեմբեր 6/18-ին և Ազգային ժողովի ներկա 62 անդամներուն 48-ին քվեով պատրիարք ընտրվեցավ Մաղթիա եպիսկոպոս Օրմանյան, երբ 55 տարեկան էր արդեն: Քաղաքական ժողովի գիրքեն հետո, անակնակալ մը չէր այս քուն: Անակնակալ մը եղեր էր միայն Բարթողիմենուն համար, որ մինչև քվեհամարի պահունք էր համար համար անոր վրա:

Օրմանյան ինքն իսկ զարմանալի կտանե, որ հայ ղեկավար շրջանները հավանած են իր ընտրվելուն: Պետք չէր գտնված ըլլային ուրիշ թեկնածուներ իրենց ուսերուն առնելու այլքան ծանր բեռ, որպեսզի պատրիարք ընեին կաթողիկութենե դարձող մը, Ազգին զեկը հանձնեին, ինչպես Օրմանյան կըսի, նախկին «պուլ կտրածի» մը:

Չենք գիտեր, թե որքան անկեղծ է, երբ կըսի, թե զժկամակությամբ լսեց իր ընտ-

⁷² «Խոհեմ» և խոսք, էջ 171:

բությունը. վստահ ենք սակայն, թե ան ընտրվի փորձած չէ:

Ամեն պարագայի մեջ, իր զգացումները ինչ ալ եղած ըլլան նախազես, ստուգդ է, որ ընտրվել է հետո պիտի չկրնար ալ մերժել:

Օրմանյան հիշելու առթիվ, թե պատրիարքությունը ընդունելու ստիպված եղավ, հակառակ նախազես անոր ցանկակած լրացրուն, կըսէ. «Կացությունն ալ կստիպեր զինքն առանց վարանման հանձնառության, զի Ընդհանուր ժողովով գումարման և պատրիարքի ընտրության արտոնությունը հազարումնեկ դժվարությամբ ստացված էր, և առաջինը վիճել տալով երկրորդ արտոնություն ստանալը անստուգդ էր, և Ազգը անդուիս թողու կամ տեղապահական իշխանությունը շարունակիլ տալ, ազգային կանքի հայտնի դաշտանի դաշտանություն եղած պիտի ըլլար: Այդ ընտրության մեջ ազգային հանրության կամ Ազգային ժողովին ունեցած մտայնության հայտնի նշան մըն էր վարչական կրկին ժողովներուն, և հատկապես Քաղաքական ժողովին կազմությունն ալ, որուն ըլլոր անդամները շափովորության և ճկունության անձնավորություններ մեջ:

2. «ԱՐԻՔ ՀԱՅԿԱԶՈՒԽԵՔ»

Հարց էր իսկապես, թե Օրմանյան ինչպես պիտի անցներ իր առաջին քննությունը:

Հայոց Ազգային Սահմանադրությունը երկար ատենե ի վեր մզգավանջն էր Համիդին: Անոր հավատացուցեր էին, թե հայկական խրառումներուն մեջ մեղք ունի նաև այդ Սահմանադրությունը, որ ասպարեզ կուտահայ արտոնաները արձագանքելու անվախ, և որ տեսակ մը պիտություն ստեղծած է պիտության մեջ:

Ազգային երեսփոխանական ժողովը, որ իր նիստերուն զադար տված էր ատենե մը ի վեր, իրավունք ստացավ, ինչպես տեսանք, գումարվելու պատրիարք ընտրելու համար: Համիդ այն պայմանով միայն արտոնիր էր անոր գումարումը, որ փոփոխության ալ հեթարկ Ազգային Սահմանադրությունը, ջընչելով անոր մեջին ըլլոր այն տրամադրությունները, որոնք բացառիկ իրավասություններ կուտային հայ ազգային մարմիններուն՝ պիտության մեջ իրեք տեսակ մը պիտություն:

Արդ, հիմա, որ պատրիարքն ընտրված էր, կսկսեին դժվարություններն ալ, և Օրմանյան գիտակ էր կնճիռին, որ իր առջեր կբացվեր ահա:

«Օրմանյանի պատրիարքական գործունեության առաջին քայլին դիմացն ելած դժվա-

էին, որով Պատրիարքարանի առաջիկա ուղղության ուղղելով ցուցված կըլլարը⁷³:

Ընտրության վակերացումը կհապաղեր սակայն, անձկության մատնելով հայ շրջանակները: Հայտնի էր, որ Բարթողիմենուի ըլիքը դավ կլարեր տակեն: Եվ այսուղե ևս Արթին փաշայի հեղինակության պետք եղավ՝ Համիդը հաճեցնելու համար:

«Կատարված ընտրության վակերացումը տասնումենկ օր հապաղեցավ, — կըսէ Օրմանյան, — զի Զամիլյանի և իր կուսակիցներուն հակառակ շանքերը, և 1882-ի նարնոտագնապին վերանորոգված հիշատակները կայսեր միտքն ալ պղտորած էին, և Տատյանի փութաջան պնդումներուն և զաղղիկական դեսպանատան միջամտության, և զիս Կարինի ճանցող Պետական խորհրդունախազա՞ն Սայիդ փաշայի վկայության պետք եղած էր կայսեր միտքը անդորրելու նոյեմբեր 17/29-ին վակերացման հրամանը արձակվեցավ»⁷⁴:

Կմնար, որ Օրմանյան իր ուխտը կատարեր Պատրիարքական Աթոռը նստելի առաջ:

Բոլորը անձկությամբ այդ օրվան կսպասեին: Մաղաքիա Օրմանյան իր առաջին քընությունը պիտի անցներ այդ օրը իրը պատրիարք:

Իրությունը սահմանադրական ինդիրն էր: Կապավորությունը նախապես Զամիլյան—Նուրյան թելադրությանց համաձայն մտադիր էր պատրիարքական ընտրությունը Սահմանադրության վերաբննութենեն և վակերացումնեն ետքին թողով, որ անպայման պիտի հետաձգեր առժամյա վարչությունը: Բայց Տատյան հաջողեցավ կայսր համոզել, թե առանց օրինավոր գլխով վերաբննություն և վակերացում անհնար է, և պատրիարքական ընտրությունը պետք էր հառաջեր. բայց միանգամայն հանձնառու եղած էր ընտրություննեն անմիջապես ետքը վերաբննության ձեռնարկել տալ, և այդ նպատակով հատուկ որոշում կայացնել տվեր էր ընտրողական ժողովին սկիզբը»⁷⁵:

«Ինդրու նյութ կազմող պարագա մըն ալ Սահմանադրության փոփոխությունն էր, որ կառավարության և արքունյաց կողմեն իրեն պայման առաջարկված էր ընտրության արտոնությունը տալու համար, և Տատյան ալ այդ պայմանը պաշտոնապես առաջարկած և երեսփոխանության քննունել տված էր, թե-

⁷³ «Ազգապատում», Գ, էջ 5073—5074:

⁷⁴ «Խոսք և խոր», էջ 172:

⁷⁵ «Ազգապատում», Գ, էջ 5074:

պետ ու ոք փոփոխության համամիտ էր, և կմնար զայն հաշտեցնել Սահմանադրության վրա կատարվելիք պատրիարքական ուխտին հետո⁷⁶:

Ահա թե ինչու, կըսեինք, պատրիարքական ուխտը նոր պատրիարքին առաջին ալ քննությունը կոչված էր ըլլալ:

Օրմանյան կզգար, որ դժվարություններն ու փորձությունները հաղթահարելու համար բացառիկ հնարամտություն ու խորագիտություն անհրաժեշտ է, և ինք հավանաբար զուրկ չէր այդ ձիրքերն, ու զարմանալի պիտի ըլլար, եթե շունենար զանոնք ու կիրարկության շղներ փափուկ այն պաշտոնին վրա, որուն կոչված էր:

Ազգային երդիխանական ժողովին առջև իր արտասահման բրդման բանաձեր հնարամտությանց շարքը կրանար: Ան ստիպված էր մեկ կողմն չգրգռել Համիդը, և մյուս կողմն է դժգոհ շնորով Ազգը, որովհետև, պետք է խոսովանիլ, Սահմանադրության անվթար պահպանման շատագովներն ալ փոքր թիվ մը չէին կազմեր Ազգին մեջ: Այնպես որ անձկությամբ կսպասվեր, թե նոր պատրիարքը ինչպես պիտի ընե իր ուխտը Ազգային ժողովին առցէ, որ նիստ պիտի գումարեր նոյեմբեր 20-ին:

«Օրմանյան յուր ուխտը արտասահմանց ճիշտ Սահմանադրության մեջ գրված բանաձեռվ, — կգրի ինքը, — բայց պետական պահանջման և ժողովական որոշման կետն ալ զանց ըրած շրլալու համար, տեղապահին ձեռքին պատրիարքական զավագանը ընդունելով և ժողովականաց դանալով հայտարարեց, թե յուր ուխտին առարկան այսօր ուժ ունեցող Սահմանադրությունն է, և կիոխի միայն երբոր ամեն օրինական և վավերական ձևակերպությանց լրմամբ նոր Սահմանադրություն մը այսօր ուժ ունեցողին հաջորդե: Սիրտերու անուն գոհունակությամբ ընդունվեցան այս հայտարարությունները և սկզբնական լավ տպագորություն գործեցին: Իսկ Ազգին գեպ առ կայսրն ունենալիք զգացմանց կետն ալ ճարտարորեն հեռավոր անցյալին և ապագա ակնկալության վրա հիմնելով, տեսակ մը վերապահություն ըրած եղավ ներկային և մոտավոր անցյալին վրա»⁷⁷:

Իսկապես որ փայլուն քննություն մըն էր տվեր նոր պատրիարքը: Իսկ վաղը՝ Պիտի կրնա՞ր տոկալ նոր փորձություններուն, որոնք շարված էին առջեր:

Օրմանյան հաճախ կպարծենա, որ հաջողած է Սահմանադրության վերաբննությունը

⁷⁶ «ԵԽՈՒ և խոսք», էջ 172:

⁷⁷ «Ազգապատում», Գ, էջ 5075:

երբեք սեղանի վրա շբերել իր պատրիարքության տարիներուն, հակառակ խոստովածին զոր Տատյան տված էր Սուլթանին, և հակառակ իր իսկ խոսք տալուն պատրիարք ընտրված ատեն: Այդ վերաբննության վտանգը հեռացնելու համար Օրմանյան որիշ միջոց չէ գտած, բայց եթե առկախել անոր լրիվ կիրարկությունը: Ու զինքը Սահմանադրության հանդեպ անհավատարմության մեջ մեղադրողներուն միշտ պատասխանած է, թե Սահմանադրությունը չկիրարկելով է, որ զայն փրկած է, որովհետև զայն կիրարկել պիտի նշանակեր անոր վերաբննության հավանիլ, և վերաբննության հավանելով, պիտի տեղի տար անոր ծաղրանկարի մը վերածման:

Օրմանյան, այնուամենայնիվ, չուզեց բոլորվին ալ «Հակասահմանադրական» ըլլալ, այսինքն պարբերաբար հաշիվ շտալ Ազգին: Բայց Ազգային ժողովը գումարել՝ զայն Սահմանադրությունը վերաբննելու հրավիրել էր, իսկ առանց Ազգային ժողովին որուն կրնար հաշիվ տալ: Թուրքերը աղվոր բացատրություն մը ունին «Հիլլեյի շերիյե»-ն, որ կնըշանակե սաղրանքին օրինական ձև մը տալ Օրմանյան և այդ հարգը կիրարկեց հաճախ: Ազգային ժողովի անդամները իր մոտ կիրավիրեր իր անվան տոնին, և անոնց գեկուցում կուտար Ազգին գործերուն մասին, ի հարկին լսելով անոնց թելադրությունները ևս:

Բայց հարցը կնճոռտեցավ, երբ Ազգային վարչությունը իր երկամյա շրջանը լրացուց 1898-ին: Սահմանադրությունը կպահանջեր նոր ընտրություն կատարել, բայց Օրմանյանի փորձը Ազգային երեսփոխանական ժողովը նիստի հրավիրներն՝ պետության բացարձակ արգելքին բախեցավ: Կառավարությունը կարուկ կերպով կպահանջեր Սահմանադրության փոփոխությունը լրացնել նախ, և հետո միայն ընտրության ձեռնարկել: Շվարած էին պատրիարք ու Վարչություն: Անել մը կար իրենց առջև և անկե դրւոս գալու համար երեք զարտուղի ճամբաներ կայիին՝ կամ անմիջապես ձեռնարկել Սահմանադրության վերաբննության, կամ քաշվիլ պաշտոնե, և կամ զայն շարունակել անորոշ ատեն մը, մինչեւ որ լավագույն լուծման մը նպաստավոր պահը ներկայանար: Պատրիարք ու Վարչություն այս վերջին ելքը նախընտրեցին: Անոնց կարծիքով, վտանգավոր էր Սահմանադրությունը վերաբննության հնթարկել, իսկ Ազգին գեմ դավաճանություն պիտի ըլլար պաշտոնը լքել ու քաշվիլ, և հետեւ բրորդ ելքը նկազագույն շարիքն էր:

Օրմանյան, վերհիշած ատեն ազգային մարմիններու շփոթությունը այս դժնդակ

և ըլքնտրանքին առջև, կգրե, «Այդ ընթացքը թերեւս ոմանց աշքին Վարչության կողմեն պաշտոնի վրա մնալու բաղձանակ մեկնի, սակայն կացությունը անկողմնակալ կերպով ողջամիտ դատողները շուտով պետք է համոզվին, թե Վարչության դիրքը ոչ պատիվի ու շահի և ոչ ազդեցության ու իշխանության կողմեն փափագելի և հաճելի կողմ մը չուներ, որ ժողովականները զայն պահելու հրապուրվելին, ընդհակառակն շարունակ ծանրատաղուով բեռի մը տակ մնալու վիճակն էր, որ իրենց կապասեր», — այսինքն չկարենալ ոչ կայսրը ողոքել, ոչ Ազգը հաճեցնել, ոչ կացությունը բարգորեն, և ոչ խեղճությունը դադրեցնել, այլ անհնարինին դեմ սրտմաշուր կրել շարունակել»⁷⁸: Օրմանյան կավելցնե, թե անիմաստ պիտի ըլլար մտածել, որ ինք դեմ կրնար եղած ըլլալ նոր Վարչության մը ընտրության և «նորերեն խիթալով հիները պահելու հետևած ըլլալ», «զի փորձով հաստատված բան մըն է, թե ավելի դյուրին է նորերու հետ մաքառի, ավելի դյուրին է անվարժները գործածել, քան վարժվածները կառավարել:

Նվազ մտահոգի շեղան կնճռոտությունները Վարչության հաջորդ երկամյակներուն առթիվ ևս, որոնք կլրանային 1901-ին և 1903-ին: Նույն եղանակով կներկայանար այդ տարիներուն ալ, ու դարձյալ շվարած էին պատրիարք և Վարչություն: Պետությունը ոչ միայն հրաման շեր տար երեսփոխանական ժողով գումարելու, այլ կարտնեղեր, երբ Վարչության անդամները հրաժարելու խոսք կընեին կամ կփորձեին ժողովների բացակայիլ և որպեսզի զանոնք հաճեցնե իրենց պաշտոններուն վրա մնալ, Համիդ 1903-ին պատվանդաններ բաշխեց գորեթե բոլոր ժողովականներուն:

«Ժողովականաց մտայնությունը կատարյալ բացատրած ըլլալու համար պետք չէ մտադրութենե վրիփեցնել, որ պարզապես արտաքին պատիվները չեին իրենց վրա ազդողները, այլ 1903-ին արձարձվող կենսական խնդիրներն ալ, ուստահայոց եկեղեցական կալվածներու տագնապը, երուաղեմի հաշվեպահանջ շարժումը, և Կիլիկիո Աթոռին նոր կազմակերպվիլը՝ գորավոր ճնշումներ կրանեցնեին իրենց միտքին վրա Պատրիարքարանը անտերունչ լիովու համար, և Օրմանյան ևս յուր կողմեն միայնակ և անօգնական մնալու ենթադրության առջև անտարբեր չեր»⁷⁹:

1905-ին, երբ նոր երկամյակ մը կլրանար, պելի բարդ էր սակայն խնդիրը: Այդ տարին Ազգային Վարչությունը գորեթե բոլորու-

վին կազմալուծված էր, Քաղաքական ժողովի 14 անդամներեն 4-ը միայն կապրեին, իսկ կրոնական ժողովը 6 անդամով մնացած էր լոկ, ու այլս անհնար կդառնար նիստ գումարել և որոշում տալ: Իրերու այս կացության առջև մնացյալ անդամներն ալ ձեռնթափ եղած էին:

Օրմանյանի համար տագնապալի օրեր էին, որովհետև կարելի չէր գործել այս պայմաններուն մեջ, և ոչ ալ հավանիլ կառավարության ցուց տված ելքին, այսինքն գործակիցներ անվանել իրեն և ենթարկել պետության վավերացման: Բուռն ճիգեր անհրաժեշտ եղան թարձրագույն դռան մոտ, մինչև որ կառավարությունը հաճեցավ ի վերջո Աղգային ժողովի անդամները նիստի հրավիրել անհուր կերպով մը և Վարչություն ընտրել տալ: Այդ նիստը տեղի պիտի ունենար 1906 հունիս 25-ին, պատրիարքին անվան տոնին օրը, երբ երեսփոխանները Պատրիարքարան պիտի զային պատրիարքին տոնախմբությունը շնորհավորելու պատրվակին տակ: Որեւէ մեկուն մտքեն չէր անցներ անշուշտ նոր երեսփոխանները ընտրել կանչվողները միշտ հիները պիտի ըլլային, որոնցմե դեռ 61 անձեր մնացեր էին, թեև բոլորն ալ իրենց տասնամյա շրջանը վաղուց լրացուցած: Եվ այդ ձևով ալ մարմին առին նոր կրոնական ու Քաղաքական ժողովները, որոնք և վերջինները պիտի ըլլային Օրմանյանի պատրիարքության օրով: Իրենց երկամյա շրջանը դեռ շրացած պիտի պալթեր Օսմանյան Սահմանադրությունը:

Ազգամ մը ևս փրկվեցա՝ պայսպես Թուրքիոց Ազգային Սահմանադրությունը: «Սահմանադրական պահանջները պահվեցան իրենց էական մասերուն մեջ, — կըսե Օրմանյան, — և բացառությունները անկարուր կետերու վրա եղան. արդեն ամեն օրենք ալ կներե էականները փրկելու համար աննշանակները զոհել Պատրիարքը բավական աշխատեցավ և զնահատվեցավ Սահմանադրությունը պահպանած ըլլալուն, և ինքնին ընտրյալներ ցցուցնելուն և դժվարության հանդիպողներն ալ հաստատել տված ըլլալուն համար, ոչ միայն արդյունքը գոհունակությամբ ողջունվեցավ, այլև անկեղծ խնդականությանց նյութ եղավ»⁸⁰:

Իր պատրիարքության ամբողջ շրջանին, Օրմանյան միակ ձգտում մը կթվեր ունենալ՝ բայց չտալ, թե առիթ տվավ, որպեսզի Համիդի խողմողե Հայոց Սահմանադրությունը, ինչպես ըրեր էր երկրինը. և անշուշտ այդ բանը պիտի ըներ ան, երբ Սահմանադրությունը ձեռքը տայիր; որպեսզի քանի մը բարեփոխումներ մտցնե, մեկը, որ Սահմանադրու-

⁷⁸ Ալլգապատում, 9, էջ 5116.

⁷⁹ Անդ, էջ 5301.

թյուն բառն անգամ լսելուն պես կարսուար ժամերով Օրմանյան կուզեր ըստ տալ օր մը, թէ Սահմանադրությունը իր հաջորդին կրցավ հանձնել ինչպես ինք ստացեր էր, տա՛ռ մը շփոխված մեջեն:

Աղեկ' կուգար, ինչպես ինքն իսկ կըսի հաճախ, իր մտահոգությունը Սահմանադրությունը դարձակին մեջ կղպած պահելու, վախճանալով՝ որ անոր անոնց կարտասանվի, և միենույն ատեն ձեռքը ֆրկել, եթե կարելի չէր բան մը կիրարկել լրիվ: Իր գործունենության հիմնական գիծն եղավ այդ, թշանի մը, որ մարդ ի վիճակի չէր ոչինչ կիրարկել լրիվ:

Երբ Օրմանյան կուգար պաշտոնի գլուխ, լուս ու մոռալ էր Ազգը, վաղուց էր մոռցած իր երրեմնի խանդավառության օրերը, երբ տարին անգամ մը թելքողի դաշտը կամ Ազգային հիվանդանոցի պարտեզը կհավաքվեր Ազգային Սահմանադրության տարեդարձը տոնելու: Ի՞նչ ցնծություն կա եղեր այն ատեն, ի՞նչ երազներ և հուսեր: Կարծեն եղեր, թէ երազն կության օրերը հետզետե կմոտենան, և ամեն տարի քայլ մը առաջ կնեսե Ազգը: Ու կպոռան եղեր իրենց թոքերուն բոլոր ուժովը.

«Արիք հայկազունե, հառաջ ընթաճանե.
Սահմանադրության նոր բարե մալ
տանե...»:

Հիմա, Օրմանյանի օրին, լոեր էր Ազգը, մեկ կողմ էր քաշվեր մոռալ: Սահմանադրությունը ա'լ տոնող չկար: Եվ սակայն մարդոց մեջ գեռ տարտամ հույս մը կար, թէ այս տարիները կփոխվին օր մը, թէ Սահմանադրությունը օր մը դարձյալ կտոնվի:

Ու բոլորը կսպասեին, որ պատրիարքը զայն պահն իրենց, որպեսզի օր մը դարձյալ պոռան թելքողի դաշտը: «Կեցցե միշտ Ազգն ու Սահմանադրությունը»:

Ու չէր խորհեր ոչ ոք, թէ ինչպես զայն պիտի պահներ այս դժբախտ մարդը, զոր պատրիարքը դրին Ազգին գլուխը «գտան ժամանականերու մեջ», ինչպես կարծանագրեն հին մադդաշտներու:



Ճիշտ հարյուր տարի լրացավ այն օրեն ի վեր, երբ կիրարկության դրվեցավ Թուրքիություց Ազգային Սահմանադրությունը: Արդարեւ 1860-ին էր, որ խմբագրած էր ան և յորս տարի հետո, 1863-ին, կրած օրոշ բարեփոխումներ իր վերջնական ձևը ստանալու համար: Հարյուր տարին ի վեր անով կկառավարվի Թուրքիությունը, թեև երրեմն տակախված վիճակի մեջ ինչպես էր Օրմանյանի օրով, կամ թլխատված ինչպես է ներկայիս: Երբ ան կիրարկության կղրվեր, մեծեծ բարիթներ, գրեթե իր փրկությունը

կսպասեր անկե արևմտահայ ժողովուրդը, որովհետեւ մարմին առած տասնյակ տարիներու պայքարաների հետո հանուն ժողովրդական խավերուն իրավունքներուն ազգային գործերու մեջ, ան կուգար իրը թէ վերջ տալ հին շարիքներուն և ապահովել արևմտահայ ժողովուրդի վերեկը: Այն օրերու մտայնությունն էր, որ երգել էր տվեր Հարություն Սվաճյանին. «Կեցցե միշտ Ազգն ու Սահմանադրություն»:

Առհասարակ այն համոզման հասան մեր մոտավոր անցյալը պրատողները, թէ քառականի Սահմանադրությունը, և Ազգային երեսփոխանական ժողովը, որ անոր հովանինին տակ գործեց, ուրիշ բան չէր, բայց եթե կրկես մը ամով վեճերու, կրքու վիճարանությանց և հաճախական զայթակղութիւն տեսարաններու: Բան մը կմոռնան սակայն անոնք՝ թէ նույնիսկ այդ քառակուսի անիվը առիթ տվականության գան ժողովրդական համակերը, և սահմանվին հին օրերու կամայական խավերը, իսկ այդ անփառունակ կրկեսը երրեմն բեմ մը եղավ, ուր արձագանք գտան հայ ժողովուրդի ցավերը և հոչակղեցան անոր բաղձանքները:

Որևէ բարիք կոչված էր բերելու այդ Սահմանադրությունը, եթե կիրարկվեր Օրմանյանի պատրիարքության տասներկու տարիներուն, այսինքն Համբիդի ամենին ավելի կատղած ծրանին, ավելի քան ինդրական է: Շատ միամիտ պիտք է ըլլալ կարծելու համար, որ հայ ժողովուրդի ցավերը արձագանք պիտի գտնեին Ազգային երեսփոխանական ժողովին մեջ, եթե գումարվեր, կամ անոր ազգային բաղձանքները պիտի կարենային լսվիլ հոն գոն ամենազույզն շափով մը: Ան շատ-շատ պիտի զառնար լորձնաշուրթն փառաբանությանց ամբիոն մը, ուր գիշեր-ցերեկ ճաներ պիտի խոսվեին վեհափառ և Սովորանին արեկատության համար: Ասկէ զատ, ան պիտի ստիպվեր վերաբնության ենթարկել Ազգային Սահմանադրությունը Համբիդի հրաճանակներուն համաձայն, և ծաղրանկար մը միայն թողով այն նվիրական ավանդեն, զոր իրենց հաջորդներուն ժառանգություն էին ձգեր Սերվիլիչեն, Ռուսինյան և Պալյան:

Օրմանյան համակերպելով, որ Ազգային Սահմանադրությունը մեռյալ տառ մնա իր օրով և Ազգային երեսփոխանական ժողովը կանոնավոր նիստեր գումարե, գուցե սահմանադրական պատրիարք մը շեղավ և շկըրցավ հերոսանալ իզմիրլյանի պիտի: Բայց բոլորովին ալ անիրավ չէ, երբ ան կպնդե, թէ Ազգային ժողովը նիստի շկանչելը ուղմագա-

րություն մըն էր Ազգային Սահմանադրությունը վերաբննելու վտանգեն ազատիու և անվթար հասցնելու համար ավելի լավ օրերու:

Մեծ ճարտարություն էր զազանի մը երախեն փրկել հայ ժողովուրդի հույսերուն ու ցնորդներուն այդ հեր խորհրդանշանը...:

3. ԱՐՅՈՒՆՈՏ ՍՈՒԼԹԱՆԸ

Օրմանյան գործ պիտի ունենար արդարեւ գազանի մը հետ, որմեն կսովար ամրութեակիրը, և որուն հազար զգուշությամբ կմտանար Եվրոպան:

Մանր էր բեռը, զոր հայ ժողովուրդը կդներ Հոգևորականի մը ուսերուն, զայն զետեղած ատեն Պոլս Պատշիարքական Աթոռին վրա:

Օրմանյանի պատրիարքության շրջանը մտնելու առթիվ, առաջին մտածումը կը լւաբուու, թե նորընտիր պատրիարքը ի՞նչպես պիտի կրնար գուլի ելել վեհապետի մը հետ, որ Աստուծո ստվերն էր երկրի վրա», ստվեր, որմեն կդողային սակայն իր հովանիին հանձնված միլիոնավոր մարդիկ:

Բայց նախ շահնեկան էր Օրմանյանի կարծիքը լսել մարդու մը մասին, որ արդեն «Կարմիր Սուլթան»-ի տիտղոսն ուներ աշխարհի առջեւ և որուն հետ պիտի փորձեր լիզու գտնել ինք այդպիսի գծնդակ օրերու:

Եթե կուղենը Օրմանյանի կարծիքը լսել շամիդի մասին, անոր համար է նախ, որ Պոլս նախկին պատրիարքը կրցած է շամիդը ճանշնալ: Ճիշտ է, որ շամիդ կապրեր ու կործեր անթափանց քողի մը ետին, ու դժվար է անոր ՅՅ տարվան թագավորությունը ճշգրիտ բացատրել, որովհետև այդ քողը որբեր շպարզվեցավ: Բայց Օրմանյան պետք էր շամիդը բավական ճանշած ըլլար ռտասներկու տարի մոտեն շփումներով, և ոչ լոկ վարչական, այլ հոգեբանական երեւությները ուսումնասիրելով», ինչպես ինքը կրսի: Տասներկու տարին բավական է տեղ մը ճանշնալու համար, որքան ալ այդ տերը իր պատգամները կորկի հաճախ մորենիի մացառներուն հտեւն, դեմքը ծածկած փուշուուն կունակը:

Համեկան էր Օրմանյանի կարծիքը լսել շամիդի վրա նաև անոր համար, որ առեղծված մը մնացած է շամիդի դեմքը: Շամիդի կենսագիրներ շատ ունեցած է, բայց անոնք ավելի վեպ է որ շարադրած են Յըլդըզի մենակալին շուրջ, շանալով կարելի եղածին շափ իորբերդավոր բնծալել անոր անձնավորությունը: Շամիդի իսկական դեմքը բացարող մը չէ եղած, ան մեզի պարզված է մանրավեպեցու մեջեն, իրեն թե առասպեկտական անձ մը ըլլար, որուն հետ շփում ունեցած ըլլար որպէս մեկը: Նույնիսկ թուրք պատմությունը Յըլդըզի ներքին կյանքին լրիվ ծանոթ չէ, ու շամիդ և իր անմիջական

արրանյակները շատ բան առին մեկանդ տարին Յըլդըզ քաղաքնիքներնեն: Ամեն մեկը տարբեր դատեց Համիդը, զին թուրք տարբեր, նոր թուրքը տարբեր, բայց ամենքն ալ կիսկատար կամ հարեանցի:

Միայն Համիդին պարապան չէ այս: Բոնապետներն շատերն են սխալ դատված: Եղած են բոնակալներ, որոնց անոնք սարսափով տված է ժողովուրդը, բայց որոնք իրենց ներքին կյանքին մեջ մեղմ, հեղ մարդիկ են եղած հաճախ: Եղած են անոնց միջ և երկշուները, որոնք խաղալիք են եղած ուրիշներու ճնութին մեջ և որոնց շուրջիններն են աղած, որ սարսափելի դարձուցած են անոնց անունը: Համիդն ալ զարհուրելի ընծայով իր շրջապատն էր հաճախ: ոչ միայն Թահսին փաշայի կամ Արար իզզեթի նման մարդիկ, որոնք անոր անունով կպատգամեին, այլ նաև շուրջի փոքր մարդիկը, որոնք պալատին ներալ կծկտած, կկերակրվեին Համիդի կասկածամտութեննեն, միշտ երկյուղով սնուցանելով անոր հիվանդ ուղեղը և անոր վախր պատսպարելով վարագույներու, փեղկերու հտին:

Օրմանյան ինքն ալ, Համիդը դատած ատեն, միմիայն բացասական զիժեր չէ որ կտեսնե: Անոր աշքին Համիդը բոլորովին ալ այն զարհուրելի անձնավորությունը չէ, որ արյան ծարավ ունի ճիշտ և որ կոզի իր զարշապարին տակ ճզմել աշխարհը: Օրմանյան մեղի կպատմե քիչ մը տարբեր մարդ մը, որ ճիշտ-ու ճիշտ մեր ենթադրած ճիշպաղը չէ, և որուն հետ իբրև թե կարելի էր լեզու գտնել: Անշուշտ որ Օրմանյանի դատումներուն մեջ կա նաև իր բաղադրականությունը արդարացնելու մտահոգությունը, բայց և կա համոզումը ևս, որ իրականութիւնն իրնա շատ ալ հնու շրլալ:

Օրմանյան կրսե, օրինակ, Համիդի տիպարը գծելու առթիվ: «Համիդի վարչական կարողությունն անվիճելի էր: ուշիմ հետապնդություն, խորաթափանց տեսություն, անմոռաց հիշողություն, անխոնչ աշխատություն, դիպլամածոց ուսումնասիրություն, պարապայից հետազոտություն յուր առավելություններն էին, որով տիրապես տիրապետող իշխանություն կվարեր: Ես սովոր էի կրկնել, թե կայսերական գահին երեք ոտները ամուր և հաստատուն էին, վեհապետին անհատական կարողությունը, արտաքին բաղադրականության

մեջ ճարտարությունը, նյութական միջոցներու վարպես կիրառությունը, իսկ ուր որ Համբիդ կթերանար, յուր հպատակներուն հանգիպ բռնած ոճն էր, Արդուկ Ազիդի եղերական վախճանեն և Մոլադ Ե-ի դժբախտ պարագային ետքը գահակալը, կամ, ինչպես նախարարներն մին կրսեր, երկու դիակներու վրա կոփելով գահ բարձրանալը զինքն տարապայման կասկածոտ, յուր կյանքին համար երկուու, անձնականին համար վարանոտ դարձուցած էր, և ծայրահեղության հասցուցած էր յուր բատինքյան խիստ բնավորությունը Զապել և միայն զսպել եղած էր յուր ներքին կառավարության ոճը. շահի և սիրպի բոլորովին օտար էր իր միտքին, և այս էր կայսերական գահուն կաղացող չորրորդ ոտքը: Եթե Համբիդ փոխանակ ժողովուրդը զսպելու և ահարեկելու, զայն շահելու ոճն ընդգրկած ըլլար, և ինչ որ օտարներու կշլայլեր զրավելու համար, իրեններուն հանդեպ ալ գործածած ըլլար սիրվելու համար, յուր բազմարեղուն միտքին արդյունավորությամբ սիրելի և պաշտելի Վեհապետ մը կրնար եղած ըլլալը^{81:}

Օրմանյան դարձյալ այդ մասին կգրե այլուր. «Արդուկ Համբիդ երկրորդ կայսրը ուներ ուշիմության և Հնարագիտության, քաղաքագիտության և աշխատասիրության ձիրերը. սակայն հպատակներուն օգտին չգործածվեցան, շահեցողական ուղղության տեղ զսպողականը գործածեց շարունակ, որուն հաջողությունուն մշտառ չէր կրնար ըլլալ դժբախտարար»^{82:}

Եվ այս ճարդուն հետ դեմ դիմաց կհաներ դինքը ճակատագիրը:

Մարդ դժվարությանց կրախի, եթե ուզե վերլուծել Համբիդի տրամադրությունները հայ տարրին հանդեպ: Համբիդ նկատված է մեկը այն սովորաններն, որնք պատմական մարդոց շարքը մտան արյունաթափախ ձեռքիրով, և ամեննեն ահավորը բոնակալներուն մեջ, որնք երբեկցից հայ արյամբ ողողեր էին հողը:

Բայց ուրկի՝ կրխեր իր ներսը այսքան ժառակ հայ արյան: Համբիդով զբաղող հեղինակները մեկնություն տված են այս փաստին. նախ զայն բացատրած են բնազդական այն վայրագությամբ, զոր Համբիդ ցույց կուտար առհասարակ երկրին բոլոր տարրերուն հանդեպ, հետո այն կասկածամությամբ, որ հոգեկան ախտն է բոլոր բոնակալներուն և որ զանոնք կմղե մեջտեղին շքացնելու ամեն սպանալիք իրենց ապահո-

վության դեմ, առանց խտիր դնելու միջոցներուն մեջ: Եթե բացառիկ էին իր սարքած հալածանքները հայ տարրին հանդեպ, պատճառը այն էր միայն, — կըսեն իր շրջանը վերլուծողները, — որ ամեննեն ավելի հայերն էին անպաշտապան՝ իր քունը խանգարողներուն մեջ:

Եվ սակայն, առեղծված, նույն այդ Համբիդն էր, որ կհանդուրժեր հայ տարրին ներկայության պետական պաշտոններու վրա: Արդարեւ, նույնիսկ Համբիդի օրով դեռ զգալի էր հայոց թիվն ու մանավանդ գերը գրեթե բոլոր կարևոր նախարարությանց մեջ, զանց ընկելով անշուշտ Շեյխովիսլամությունն ու էվգաֆը, որոնք զուտ իսլամական հաստատություններ էին և պատերազմական ու ծովային նախարարությունները, ուր հայեր գործ էին կարող ունենալ, որովհետև մրուաքիստոնյաններուն պիս անոնք ալ գերծ էին զինվորութենե, թեև իրենցմեն ևս բանակին մեջ կար բժիշկներու կարևոր թիվ մը և ուսուցիչներ զինվորական վարժարարաններուն մեջ:

Եվ ինչ որ շատ ավելի տարօրինակ է Համբիդ հայերու միայն կվստահեր իր անձնական գանձը: Իր տիրապետության օրով կայսերական անձնական գանձի երեք հաջորդական նախարարները հայեր էին բոլորն ալ շակոր փաշ Գաղազյան, Միքայել փաշա Փորթուգալ և Հովհաննես փաշա Սագրա: Ասոնցմեն առաջինը եթե իր հոգեկան կապերը խզած էր զինք ծնող ժողովուրդին հետ, վերջին երկուքը, թեև կաթոլիկ, բայց հոգիով ծշմարիտ հայեր էին և այդպես ալ մնացին. ու Համբիդ չէր կրնար շփոտնալ այդ պարագան, և այսուհանդեր անոնց վրային երբեք չպակսեցավ իր վստահությունը:

Մեր կարգ մը անտիպա աշխատություններուն մեջ^{83:} ավելի լրիվ խոսած ենք արյամբ լեցուն այն վիճին մասին, զոր դեպքերը բացին հայ և թուրք ժողովուրդներու միջև: Բայց շնչք կրնար հարեւանցի Հիշել այստեղ, որ հայացինց սարսափները կրոնական մոլեսանդության կամ ցեղային ատելության մը պարզ արգասիքը չին, այլ անոնք շատ հաճախ հետևանքն էին «պիտական իմաստության» (հիքմեթի հյուքումեթի) մը, ինչպես թուրք քերը կողշեն ամեն բացառիկ քայլ, զոր պիտությունը ստիպված է ձեռք առնել իր ապահովության համար: Հաւ տարրը բնաշնչելով, թուրքերը կհուսային վտանգավոր մըրցորդ մը լքացնել ասպարեզեն, և միևնուուն ատեն անհետացնել սրտնեղիլ պատրիակ մը օտար միջամտությանց Թուրքիի ներքին գործերուն մեջ, ինչպես որ ավելի հետո հայ ժո-

81 «Խոր» և Խոսք, էջ 184—185:

82 «Աղջապատում», Պ, էջ 5425:

83 ա. «Հայերը և թուրքերը պատմության առթիվ», բ. «Թուրիս և իր դերը», Պ. «Թուրանի ճամբան»:

զովուրդին բնաշնչումը անհրաժեշտ պիտի դառնար թուրքերուն համար՝ անախործ խոշնուած մը բառնալու համար գեղի թուրան տանող ճամբուն վրայն։ Այլապես հայկական խրտումները պատրվակներ էին միայն հայոց գեմ սարքված հալածանքներն ու ջարդերը արդարացնելու համար։

Օրմանյան ինքն ալ համաձայն է այդ կետին, «Տիրապետող շրջանակներու մեջ հաստատված էր այն գաղափարը, թե պետք էր նկատողության ասպարեզնեն վեցցնել հայր, թե պետք էր զայն շխանել երե ոչ եյուրապես գոնք բարոյապես։ որովհետև եվրոպակողման քրիստոնյաներուն մասին եղած ձեռնարկները անոնց ինքնուրյունը շեշտած էին և անոնց համար հաղաքական գոյուրյուններ կազմած էին, ասիակողման քրիստոնյան հայուն համար ալ արծակված էր Եվրոպին շափ հառաջեր։ Այս տեսությամբ օագեցան 1894—1896-ի արյունուշտ գործերը, որոնց ավելցան քալանն ու ավեր»⁸⁴։

Օրմանյան ևս այն կարծիքն ունի ուրիմն, թե ջարդերը կանխամտածված և նախապատրսատված էին։ Անոնք ծրագրված էին կանխավ ու կսպասեին պատրվակներու շտվինք հայերս. բայց ջարդերը պիտի ըլլային առանց անոնց ալ Այդպես էր Համիդի օրով, այդպես պիտի ըլլար երիտասարդ-թուրքերու շրջանին ևս։

Համիդ միշտ կազմ ու պատրաստ էր ջարդեր հարմայելու թավական է, որ կասկածեն նոպան գար։ Օրմանյան ականատես վկան է ինքը. «Թեսք չէ նաև միտք հետացնել, թե Արդու Համիդ կուսակցականներու կողմեն իր կյանքին գեմ իսկ վտանգի երկուուներ, և իր անձն ալ նկատի կառներ իր գործածած և գործադրել տված բռնական միջոցներուն մեչ։ Կոտարված կոտորածները խաժմառու ամբոխին կատաղության համ վրեժինդրության հետեւանք չէին երբեք, այս պարզապես բարձրեն արծակված հրամաններու գործադրություն էին, և նույնիսկ մայրաքաղաքի մեջ կատարված 1896 օգոստոս 14/26-ի կոտորածին գործադիրները՝ նույն օրեր Կոստանդնուպոլիս բերված Համիդին գունդին քուրքերն էին, որոնց նույն օր Համազգեստով շերենալը, և գործածված բիրերուն հարենման ըլլալը, և գունդին քիչ օր առաջ հասած և քիչ օր ետքը մեկնած ըլլալը այս բանին հայտնի ապացուցներն էին»⁸⁵.

Համիդի իր մտքին մեջ սկսուն այն կասկածն ունեն, թե պիտի ապստամբին հայերը,

և աղկե էին մեծ մասամբ իր ձեռք առած դաժան միջոցները։

«Համիդի խորապես համոզված էր, — կըսե Օրմանյան, — թե հայեր Օսմանյան իշխանութենին ապստամբիլ կաշխատին, և թե անոնք կընան յուր կյանքին դավաճաներ»։

Ինչ կվերաբերի ապստամբության գաղափարին, Օրմանյան զայն կնկատե սակայն պարզ «եղքերվաբաղ մը», «զի Վարժապետյանի օրեն սկսելով բարձրացած աղաղակը և բանաձևված նպատակը բարեկարգությունն էր, որպեսզի հայարնակ գալառներն ալ վայելին կյանքի և ինչեթի պատրիկի ապահովությունը երբեք օտար տիրապետության անցնելու փափագ հայտնվեցավ, և ինքուրուզն կառավարության խոսքն իսկ յեղագի եթի հայերը լոկ հայարնակ նահանգներու խոսքը կընեին, և ոչ բովանդակ օսմանյան նահանգներու, բնական էր, որ հայ տարրը ուրիշ տարրերուն ալ հոգը շտանձնեներ, միանգամայն հայտնի էր, որ հայարնակ անունով կորված Հայաստանի նահանգներուն հետ բաղդատամբ, ուրիշ նահանգներու վիճակը տանելի կրնար ըսվիլ եթի հայերու մեջ զինվելու շարժում մըն ալ առաջ եկած էր, ամեն պարագայի հայտնի կցուցնեին, թե նպատակը ավազակային տարրերու դեմ անձնապաշտպանութենի անդին չէր անցներ, և բանի մը հարյուր հրացանով ապստամբություն փորձել հնար չէր, նույնիսկ եթի հազարի ալ հասներ»⁸⁶։

Գալով Համիդի կյանքին դավելու գաղափարին, բայց Օրմանյանի այդ բանը ևս «երբեք հայուն միտքեն անցած չէր, և փորձն ալ եղած չէր, որ կասկած ստեղծեր; Բարձր Դուան մեջ պայթած 1897 օգոստոս 6/18-ի ոռոմբը կայսեր անձին հետ կապակցություն չուներ; Իսկ Յըլդողի բացավայրին մեջ [1905-ին] պայթած ոռոմբը, ոչ միայն ժամանակով շատ հետառորդ էր, որ նախորդ գործողությանց պատճառ չէր կրնար ըլլալ, այլև իմ հիտագոտություններս ու տեղական քննություններս զիս հաստատուն համոզման հասցուցին, թե ան ո՛չ միայն հայոց նախաձեռնությամբ Համիդի կյանքին գեմ պատրաստված մահափորձ մը չէր, այլ պարզապես նեչիք Մեհմանի ծեռքով կազմակերպված թատերախաղ մըն էր, որ բեկհացի ժորիսի միշնորդությամբ կրցած էր հրապուրել եվրոպական անուններով ծայտալ բանի մը արկածահույզ հայեր, այդ անգույն խաղը խաղալու, որ Համիդի անձին շուրջը համական ցուցեր պիտի պատճառեր»։

Այս գդայացումց ենթադրությունը թուղթին հանձնելե հետո, անգամ մըն ալ կկրկնե, թե Համիդի անձին դիմ որևէ ատեն դավելու

⁸⁴ «Ազգապատում», Գ, էջ 5077 (ստորագծումները բնագրին են)։

⁸⁵ «Անո՞ք և խոսք», էջ 176։

փորձ չեն ըրած հայերը, և այդ կասկածեն ՀՀ առաջ եկած ենթադրությունները ստվերին դիմ մաքառելու կերպարանն ունեին»:

Վայրագ բնազդիներով թրծված, մղձավանչներու և սնապաշտությանց հաճախանգին տակ տառապող, նենգ ու անողոք ու քիշտ կասկածներով ու երկուողվ հրահրվող ճիշաղի մը հետ է, որ գործ պիտի ունենար Օրմանյան:

4. «ԳԱԶԱՆՍԶՈՒՄՊ»

Եվ սակայն պետք էր Համիդին դեմք ելլեւ պաշտոնի դեռ Ճեռնարկած:

Հաճախ առաջին պահն է, որ կվճռե ամեն րան, և Օրմանյան այդ լավ գիտեր: Ինչո՞ւ էր հապա այդքան պաշար հավաքեր, այդքան սերտեր էր աշխարհի սեն ու հերմակը, այդքան թրծվեր Վատիկանի դիմ վարած իր կոփլներուն մեջ, եթե պիտի դոդար Համիդի դեմքը ելած տաեն:

Օրմանյան կերպի թի զորդաց: Այդ կերևա տասներկու տարիներեն, որ հետո եկան:

Համիդի շրջանին հինգ պատրիարքներ նստած են Պոլսո Պատրիարքական Աթոռին վրա, ու հինգին ալ կեցվածքը տարբեր է եղած դեպի Համիդը:

Ներսես Վարժապետյանի օրով Համիդի մեջ զազանը դեռ չեր հասունցած: Ավելի հետո հազիկ թե ներեր հայոց պատրիարքին հանդինությունը՝ դիմելու Սան-Ստեֆանո և Բելին: Բայց ներսես ինքն և ճարտար եղավ շրջադարձ ընելու, ու Համիդին մոռցնել տալու իր հանդուն քալլերը: Պետք էր սակայն շատ ճկած ըլլար, որպեսզի Համիդի քանիցս մերժեր իր հրաժարականը:

Հարություն Վեհապետյանի մոտ շրոս տարվան պատրիարքության շրջանը շատ առիթներ շունեցավ Համիդի կատաղությունը ճաշակելու Պոլիսը դեռ խոռված չեր, ու գավաներու մեջ տեղ-տեղ պայթած պոռթկումները մեծ ծավալ չեին ստացած զեռ և ի վիճակի չեին Համիդը սարսափեցնելու Ասկե զատ, Հարություն պատրիարքը, էապես պահպանողական տիպար, փորձ երբեք չըրավ օսմանյան հավատարմության շրջանակնեն դուրս ելլելու Ան աշխատեցավ խաղաղ միջոցներով կորզել միտքը դրածը:

Խորեն Աշքաբան եր Աթոռ եկավ, Համիդ արդեն մտած էր նոպաներու շրջանը: Եվ այդ շրջանը իր պատշաճ պատրիարքը դտավ հանձին Աշքաբանի: Երբեմն ստրուկ

ծիշտ ամբողջ քսան տարի ոճիրներով անած և խղճմտանքը վաղուց խեղդված իր ներսը, որևէ ատենե ավելի բարի էր Համիդի միջ արյան ծարավը, որովհետև միշտ բորբած կմնային իր կասկածները:

Երբ Օրմանյան ձեռք կառներ Ազգին զեկը, գազանը դեռ խաղաղած չէր: Մատներեն դեռ արյուն կվազեր, ու բերնեն՝ կատաղության շողիքը... Ինչ քաջություն պետք էր անոր դեմք ելլելու համար:

ԵՎ «ԼԱՐԱԽԱՂԱՑ»

Ճեացավ, երբեմն իրավ եղավ այդպիսին: Ցուցերու առթիվ իր գիրքը պատսպարելու համար, որիշ միջոց ի վիճակի չէր գոտելու իր խառնվածքը: Մերթ ալ «ավելի թագավորական եղավ քան թագավորը», ինչպես նկատել կուտա Օրմանյան: Այդպիս եղավ, օրինակ, Խորեն Նարպեիի պարագային, հոգեպես արդեն քայլարված այդ մարդուն հանդեպ ավելի աններող հանդիսանալով քան եղեր էր ինքը Սուլթանը:

Մատթեոս իզմիրլյանի վիճակված էր ճաշակել լեզին: Իր օրով էին երկու դժմղակ տարիները՝ 1895-ն ու 1896-ը, որոնք հայոց պատրիարքին կամ ստրկության և կամ ցաման ժեստեր կպահանջեին: Միջին ճամրա չկար հայ հեղափոխության և Համիդի կատաղության բախման այդ պահուն: Իզմիրլյան երկրորդ ճամրան նախընտրեց՝ խրոխտ մնալ զազանին առջև: Այդ դիրքը բարիք ըրերավ ոչ հայ ժողովուրդին, և ոչ ալ իրեն: Տիտղոս մը միայն շահեցուց անոր. ժողովուրդը «Երկաթի» պատրիարք անվանեց զինքը: Փոխարին՝ ավելի և բատմնեցավ գազանը:

Մաղաքիա Օրմանյանը պատրիարք կրերին ահա այդ քստմնած գազանը սանձելու համար: Իրմե առաջ շորս պատրիարքներ դեմ հանդիման եկած էին արդեն մեծ մարդապանին հետ, և ինք սերտած էր բոլորին ալ դիմադրության ձևերը: Ինքը ուրույն մեթոդ մը ոտքեգրեց գազանը ողոքելու համար: Փորձեց, որքան թույլ պիտի տային իրեն դեպքերը, ոչ գազանը գրգուել, ոչ ալ ծունը դնել առջեր:

Պիտի տեսնենք, թի որքան հաջողեցավ գազանին դեմ ընդգրկած իր մեթոդին մեջ:

Նախ պետք է միտք բերել պահը, ըմբռնելու համար ահավոր լուծը, որուն ներքե կմտներ Օրմանյան պատրիարքությունը ստանձնած ատեն:

Դժմղակ բան է նավը վարելու կոչվել, երբ արդեն ան ալիքներու խաղալիք է, ու

դուն կոչված ես պարզապես ափ մը հասցը նել զայն: Օրմանյան պաշտոնի անցավ, երբ արդեն հայ ժողովուրդը լրիվ թողված էր բախտին և ոչ մեկ փարոս կերեար մոտը ու հեռուն, մինչ նոր խութեր կապանային խորտակել նավը: Ամենավարժ նավապետներն անգամ պիտի շամարձակեին այդքան խարակներու մեջին ճամբա մը գտնել:

Դժվար էր հովվել ժողովուրդ մը, որուն հոգին լեցուն էր վիշտով ու սուզով սարսափով ու զայրութով: Ի՞նչպես կրնաս սփոփել ժողովուրդ մը, որ իր աշքերով է անսած փողոցներու մեջ փոված դիակներու զեղեր և վաղվան համար հույս տալ անոր, երբ Համիդի անունը բած ատենն իսկ կհամակվի սարսուսով: Մարդու ուժերեն վեր և մոր մը իր զավակը մոռցնել տալ, եղբայրը եղբոր, երբ մանավանդ դեռ այնքան թարձ է թափած արյունը:

Դժվար էր հաշվի շառնել հեղափոխականներն ալ, բայց միևնույն ատեն նույնաքան դժվար՝ զանոնք հաշվի առնել: Անոնց հետեմի՝ Համիդին երախը հանձնել կնշանակեր հայ ժողովուրդի մնացորդացը, ու զանոնք արհամարհել՝ դավաճան սեպվի էր մանավանդ աղատ երկիրներու մեջ շրնչող հայ մարդոց աշքին: Բւ շմոռնանք, որ ցնորժներու ծոցն էինք դեռ, ու հեղափոխությունը ցուցերու շրջանը կապրեր:

Դժվար էր մանավանդ լեզու գտնել վեհապետի մը հետ, որ կատղած էր բովանուակ հայ ժողովուրդին դեմ, և որ հաղիվ զիշած էր իր ընտրության հավանիլ: Ո՞վ կրնար մեղմել անոր բորբոքած ուղեղը, երբ անընդհատ կգրգռեին զայն շուրջի մարդիկը, երբ մյուս կողմեն զայն կշղայնացնեին ելքուապան ու հայկական արտասահմանը:

Դժնդակ էր պահը հովվիլին ու հոտին համար հավասարապես:

Սապես կիստացնե Օրմանյան դժնդակ այդ պահը. «Հայոց համար արգիլլեցան երեկներ, առուտուներ, պաշտօնավարություններ, հարաբերություններ, գործունեություններ, դյուտուրյուններ, վերջապես այն ամեն միջոցներ, որոնք շանկելու և ոգեռվելու և կազմուրվելու կրնային ծառայել. մինչև իսկ հայոց համար հատուկ օրենքներ շինված էին, և հայերը դյուրավ դատապատելու համար նոր դատարաններ կազմված էին, ամեն միտք շփորած, ամեն սիրու կարած, հաջալերություն կորած, հանդարտություն վրդովված, փողոցի վրա երենալու իսկ երկյուղ, ամեն վայրելյան լրտեսի կամ բարդ մը բակարդին իյեալու վախ, ամեն հայի համար վարանոտ կասկած, կեցած տեղը ահուղող, կատարյալ անապահովություն, մինչև իսկ եկեղեցի երա-

լու անվատահուրյուն, զիշերճերը երազ վանելու կամ երազ շատցնելու սարսափ»⁸⁷:

Ո՞վ շապրեցավ այդ պահը, պիտի երբեք չկրնա զայն ըմբռնել:

Ի՞նչ դիրք բռնեց սակայն Օրմանյան այս դժնդակ պատկերին առջեւ: Հայտնի է, թե ան շշփոթեցավ:

Բայց չեր բավեր շշփոթիլը. պետք էր և խրոխա մնալ, ինչպես չեին կրցեր մնալ անցման շրջանի մարդիկը, որոնք իրենց ճակատներու քսելով Համիդի գահուն, թողություն էին հայցեր հայ ժողովուրդի մեղքերուն համար:

Օրմանյան միջին գիծը որդեգրեց. ոչ ծնեցավ գետնամած խոնարհության, ոչ ալ ամբարտավան ձեացավ:

Որքան ալ Օրմանյանի մեջ սկսած էր կտզմվիլ հակահեղափոխական մը, որ չեր բաժներ Համիդի գեմ սարքված ցուցերը, և որքան ալ կուսակից էր ան Համիդը սիրաշահելու շիրտչեցնելու, չգրգռելու, ներելի չէ մտածել, թե ան հլու, համր, սարուկ արքանյակն էր Յուլուզի բռնակալին: Ծիշտ կամ սիսալ, Օրմանյան ավանդապահն էր հին քաղաքականության մը, որ կիրիկ ողոքել թուրքը՝ խաղաղ ապրելու համար անոր լուծին տակ: Բայց այլև վրիպանք է Օրմանյանը շփոթել մարդոց ուրիշ դասի մը հետ, որոնք իրենց շահուն համար կքծնին, բռնակալներուն ոտքը կիյնան՝ դիրք պահելու համար իրենց, իրենց հաշիվներուն մատաղ ընելով հաճախ իրենց ժողովուրդին շահերը, և այլևս շճանշնալով ոչ մեկ խղճահարություն, ոչ մեկ խղճահարություն:

«Ազգապատում»-ին մեջ պատմագիր Օրմանյանը կըս պատրիարք Օրմանյանի մասին. «Ոչ Աշըգանի պես Պատրիարքական Գահը Սուլթանին գործիք կդարձներ, և ոչ ալ ինքնամատուց անձնվիրությամբ մը իր իսկոն ու ազգային զգացումները կսպաններ. մյուս կողմեն՝ իզմիրլանի պես ալ պատշաճից ու շահեցողական ձերը անարգելով և քաղաքագիտական ձկունությունը մոռնալով զայրույթ չգրգռել, և վտանգները շմուտեցնել: Այդ մտայնության հետեւնքն էր, որ առաջինը շափազանց կակուղ և երկրորդը պինդ նկատված ատեն, Օրմանյանը իրը երկութեն խառն ընթացքի տեր նկատվեցավ»:

Օրմանյան լուզեց իր նախորդներուն հետքերուն վրային քալել, որովհետև կմոլորեցնեին երկու ճամբաներն ալ:

87 «Ազգապատում», Գ, էջ 5077—5078 (ստորագրին բնագրին են):

հնքն է, որ դարձյալ կըսե իր մասին այլուր. «Զիս խծրծել ուզողներ իրենց բերնի ժամոց ըրին, թե Համիդի կամակատար հետևող և հաճոյակատար ծառա եղած ըլլամ, ինչ որ ճշմարտութենն հեռու է: Զորավոր և բռնավոր ինքնակալը խոնարհեցնել և հնապանդեցնել միտքե անցնելն ալ հիմարություն էր, և զիս այս վիճակի մեջ տեսնել ուզել՝ երջերվաքաղ էր: Ինձի կմնար հարմար կերպով, ճարտար դարձվածներով, հնապանդությունը միտքե անցնելն ալ հալածանքները թեթեցնել, արգելքները նվազեցնել, Ազգին կացությունը բարվութե, ներքին կազմակերպությունը պահպանել, մեկ խոսքով՝ թիւ ու շատ տանելի վիճակ մը պատրաստել: Այդ ծրագիրը Համիդին ուզած էր, և երբ ես անոր կհետևեի, Համիդի հետող չէի ըլլար, և այսլավոր բավական է իմ վրաս հարուցված զրպարտությունը փարատելու»⁸⁸:

Եթե իր ուժեն վեր էր Համիդը ընկճել, Օրմանյան հպարտ է, որ շընկճվեցավ և ինքը:

Այն տեսակցության մեջ, զոր տարիներ հետո իրեն հետ ունեցա և որուն մասին պիտի խոսիմ իր կարգին, Օրմանյան բնորոշեց քաղաքականությունը, զոր բռնած է Համիդի հետ իր հարաբերությանց մեջ:

Այն այդ քաղաքականությունը հատկանշեց երկու պարզ և բնորոշ բառերով, ըսկելով, որ տասներկու տարվան իր պատրիարքության ընթացքին ուրիշ բան չէ եղած, բայց եթե զազանազաւապ և լարախաղաց:

Գաղանը զապելու իր հատուկ ձեռն ունեն Օրմանյան: Ան գիտեր նախ շարտչեցնել զազանը, գիտեր, որ ամեն խրտչելուն կփոթորկեր Համիդը և ամեն զայրույթ հետը աղետ կրերեր: Ազգի՝ իր ծայրահեղ զգուշությունը՝ խաղաղ պահելու Համիդի շիղերը, Ամեն անգամ, որ հայոց հետ կապված անախորդ լուր մը կիմացվեր, իսկուն պալատ կվազեր՝ որնէ պատասխանատվություն մերժելու Հայ Ազգին համար, եթե նույնիսկ մտացածին ալ եղած ըլլար լուրը:

Հետո գիտեր զազանը մեղմել: Գաղաններ կան, որ կալափառվին երբ խաղաղած է իրենց ցասումը, Այդպիսի պահեր Համիդն ալ ուներ: ճարտարությունը զանոնք որսալն էր: Օրմանյան գիտեր վայրկանը ընտրել բըռնակալին հետ խոսելու համար: Ընտանեցած զազանը պահ մը կրագրի գաղան ըլլալե և դյուրին կմոտենա մարդոց:

Եվ վերջապես կփորձեր գազանը իրեն գրավել: Հաճախ կհաջողեր, բայց վերջապես պատահած կար: Համիդին հաճելի կթվեին գիտնական մարդիկը, և անոր աշքին գիտնական մըն էր Օրմանյան: Քանի մը իմաստուն խոսքով Համիդ կհրապուրվեր, և այն ատեն կլաներ ավելի սիրով:

Երբեկ լարախաղաց ևս ճարտար էր Օրմանյան: Եվ այդ դյուրին առաքելություն չէր մարդու մը պարագային, զոր բովանդակ մերոպան կճանշնար իրեր մեկը ամենեն ճարպիկ լարախաղացներին: Օրմանյանի ճարպիկ լարախաղացներին: Օրմանյանի ճարպիկ լարախաղացներին: Կայայնար ամենեն առաջ իր անկեղծության մասին համոզում ներշնչելուն մեջ: Արդարեւ, Օրմանյան գիտեր իր զգացումները անկեղծ ցուց տալուն գաղտնիքը, ըլլադրախտ առիթներով իր ցավը մատուցած ատեն սուլթանական գահութին, ըլլա իր բարեմաղթությունները սուլթանին ուղղած պահում:

Օրմանյան գիտեր մանավանդ չփրցնել լարը, երբ արդեն շատ պրկված կըլլար ան: Երբոր կզգար, թե իր այս կամ այն խնդրաները պիտի հանդիպի բացարձակ մերժման, շատ չէր պնդեր ա'լ, կամ ամենազույզն գոհացում մըր բավ կհամարեր իր պնդումներուն վերջ տալու համար:

Օրմանյան, օրինակ, հաճախ ուրիշ զինք շուներ մաքառելու համար Ցըլգըզի բռնակալին գեմ, բայց եթե տկար մարդոց զինքը միայն՝ սպառնալ հրաժարիլ: Եվ արդարեւ ան հաճախ սպառնացած է պատրիարքութենի քաշվիլ և մեկ քանի անգամ ալ իսկապես հրաժարական ներկայացուցած է Բարձրագույն Դուռը ու տունը քաշված: Ուշագրավ է որ բոլորովին ընդունայն շեն անցած իր այս փորձերը: Ան հաջողած է քանից զիջումներ կորզել Համիդեն, որ կերևա, թե Պատրիարքական Աթոռին վրա Օրմանյանը կուզեր միշտ տեսնել: Այդ զիջումները առավելապես կվերաբերեին բանտարկյալներու ազատության և երթևեկի թուլլավության:

Իր տասներկու տարվան պատրիարքության ընթացքին Օրմանյան շորս անգամ փորձած է հրաժարիլ: Առաջին հրաժարականը ան ներկայացուց 1899 սեպտեմբեր 23-ին, բնտրվելեն երկու տարի հետո, պահանջելով «հայոց համար ստեղծված բացառիկ կարգագրությանց չնշումը» և ուրիշ արդյունք ձեռք չձգելով, բայց եթե 51 բանտարկյալներու ազատ արձակումը, ներքին երթևեկի դյուրության համար կարգ մը խոստումներ, և արտօնություն ինչ-ինչ եկեղեցիներու շինության: Խառն ծոլովը սակայն գոհացուցիւ կամեր ստացված արդյունքը, «ավելի և պնդելը լարը փրցնել» կնկատեր, և Օրման-

յան կտտիպվեր Պատրիարքարան գալ տասը
որ հրաժարած մնալի հետո⁸⁹:

Հինգ ամիս հետո, 1900 մարտ 8-ին, Օրմանյան կհարկադրվեր սակայն իր հրաժարականը կրկնել, որովհետև տրված խոստումները խոստում ալ մնացեր էին: Ավելի քան երկու ամիս տևած են այս անգամ հրաժարականը ետ առնել տալու փորձերը, և արքունիքին կողմե իսկ տրված հավաստիքներու վրա է, որ Օրմանյան հավանած է ետ առնել հրաժարականը, «որ եթե ամբողջությամբ պահանջումնիս չիրականացուց, զգալի փոփոխիթյուններ հառաջ բերավ նպաստավոր ուղղությամբ»⁹⁰:

Երրորդ հրաժարականը բխած է Կիլիկիո Կաթողիկոսության խնդրեն, 1902 հուլիսի 20-ին, երբ «շենք գիտեր ինչ դիտմածը և որոն գրողությամբ կառավարության կողմեն Կիլիկիո Աթոռը Կոստանդնուպոլսու Պատրիարքութենեն անջատելու և նոր ու ինքնուրույն հասարակության վերածելու գաղափարը ծագած էր»: Օրմանյանի հրաժարման այս փորձը իր օգուտը տվավ, և Սուլթանը պատրիարքը «պալատ հրավիրել տալով՝ պաշտոնավես հաղորդել տվավ, թե Աթոռներու հարաբերությունները ըստ առաջնույն շարունակել հրամայած է»⁹¹: Այս հրաժարականը ամիս մը միայն տևած էր:

Հրաժարական տալու շորորորդ և վերջին փորձը Օրմանյան կատարեց շրոս տարի հետո միայն, 1906 հունիս 16-ին, «պարզապես կուսակցականներու սպանութեներեն ահարեկած և խոյս տված ըլլալու գաղափարը շվարթուցանելու համար»⁹²: Սուլթանին մոտ Օրմանյան այս փորձը ըրավ ստիպելու համար կառավարությունը, որպեսզի արտոնե զինքը Ազգային ժողովի անդամները նիստի հրավիրել, ընտրելու համար Ազգային կեդրոնական նոր վարչություն մը, հինը ուղղութիւն կազմակերպված ըլլալով: Այս հրաժարականը ևս ամիս մը միայն տևեց, որովհետ կառավարությունը հաճեցավ խնդրված հրամանը շնորհել...

Եթե լուրջի շվերածեց իր հրաժարականները և փոքրիկ գոհացումն մը հետո ետ առավ զանոնք, կըսէ, թե անոր համար էր, որ հաջորդության տագնապ շտեղծե և անգույն շիողու Ազգը: Եվ հետո, անոնց հաճախակի կրկնումը զանոնք պիտի դրկեր ուժե և աղդեցութենե: «Հրաժարելու փաստը յուր տեսությամբ անմիջական պարագայի մը հանդեպ իր գեղթափ կրնար գործածվիլ, և ու

թե հիմնապես կացությունը փոփոխելու կրնար ծառայել, որ միայն իշխանավորին միտքին վրա ներգործելով կրնար ստացվիլ: ...իսկ բոլորովին գործե ձեռնթափ սլլալու միտք երբեք չունեցավ, զի պաշտոննեն խուհավատարիմ մնալը իրեւ դասավորություն, և պաշտոնին պատգամ կճանշնար, առանց պաշտոնի սիրահար մը ըլլալու, զոր միշտ իբր ապաշնորհ զրադանք կնկատեր, բնու կրելու, և ու բերկրելու պատճառով»⁹³:

Բոլոր այս հրաժարականները ուրիշ բան չին հետևաբար, այլ եթե բողոքի ցուցեր հաճախ աճապարարության դիմել:

Երբեմն սակայն երկու լարախաղացներ ստիպված էին խաղալ միևնույն լարին վրա: Ու հազվադեպ չէ եղած այդ Այդ պատահած է ամեն անգամ, երբ Համիդ փորձած է անկարելին պահանջել հայոց պատրիարքնեն: Օրմանյան ճարտար է եղած խուսափումնեռու միշտ, եռու պիտք եղած է շրջանցել վտանգը:

«Համիդ, — կպատմե Օրմանյան, — զիս ալ կուսակցականաց մտերիմ և մասնակից եղած գիտնալով, կկարծեր, որ իմ խոսքս անոնց մոտ ազդեցություն կունենա և իմ խորհուրդներու կանսան: Այդ միտքով էր, որ ստեղ ինձի կրկնվեր, որ եթե ուզեի կըրնայի կուսակցականությունը շնչել, որուն ես կպատասխանեի, թե երկու միշտոց միայն ունիմ տրամադրելի, խրատ և աղոթք. խրատը լսող չկա, աղոթքը ուզող չկա, և եթե կուզեն կրնան զիս զորացնել իմ առաջարկներս գործադրելով, և այս ալ կայսեր և կառավարության ձեռքն էր»⁹⁴:

Օրմանյան կօգտագործեր ամեն առիթ բան մը կորզելու համար Համիդեն: Նույնիսկ սպանալիքները, զորս կստանար ներսեն ու դուրսեն՝ առիթներ էին ավելի ևս հաճելի դառնալու համար Համիդին և խելու համար ինչ որ զլացված էր երեկ: Ամեն հարզած, որ իրեն զեմ կուղղվեր, Համիդին ներկայացվեր իբրեւ հետևանը դժգոհության մը, և կինդրվեր այդ դժգոհությունը բառնալ: Կզգացներ, թե ժողովրդականությունը, զոր հետպհետե կշահէի, արդյունքն է բոլոր այն մերժումներուն, որոնց կարժանանան պալատ ըրած իր դիմումները:

Օրմանյան բազմաթիվ դեպքեր կհիշե, երբ հաջողած է ըմբերանել պալատը, մանավանդ երբ դեմ-հանդիման գտնված է ծիծաղելի վերագրումներու Աղոնցմե ոմանք ծիծաղով մը փակած է, ոմանք ալ փաստերով հերթած:

⁸⁹ «Ազգապատում», Գ, էջ 5117—5118.

⁹⁰ «Խորհը և խոսք», էջ 196,

⁹¹ Անդ, էջ 199:

⁹² Անդ, էջ 201.

⁹³ «Ազգապատում», Գ, էջ 5118—5119.

⁹⁴ «Խորհը և խոսք», էջ 29.

Օրմանյանի սեթևելի ձևերը պալատին առջև, անշուշտ որ համելի շեն եղած բոլորին, մանավանդ դուրսը ապրողներուն: Ինչ ալ անվանես զո՞ն այդ ձևերը, քժինք թե շողորդություն, շափաղանցված եռանդ թե դիվանագիտություն, բան մը կարելի է հավաստել սակայն, թե անոնք սրտե չէին բխեր, և կշռալվեին պարզապես անցնելու համար վայրկանը:

«Ու հիմա աղոթք մը վեհափառ Սովորականին արևաշտությանը համար»:

Այսպես կվերշանալին գրեթե իր բոլոր քարոզները:

Բայց ունկնդիրներն ո՛վ էր որ չէր գիտեր, թե անոր սրտին խորոնկեն չէ որ կուգային այդ պայմանագրական բառերը:

Եվ եթե կուզեք, տեսակ մը հեգնանք կար այդ բառերուն մեջ, երբ մաղթանք մը բանաձեկ կվերածվի արոտասանվելու համար տվյալ պահուն, ան արդեն կես մը հեգնանք է:

Ու հեգնանք շկա՝ նաև այն «ամեն»-ներուն մեջ, որով ունկնդիրները կծայսնակցեին մաղթանքին:

Այս բոլորին մինչև «լորձնաշուրբին փառաբանությունը» լեռներ, ձորեր կան:

Օրմանյան շատ ճիգ թափած է պալատին առջև, որպեսզի իր վրային սրբին ամեն հին արատ, որ գեռ վրան կմնար Կարսոն տարիներն, երբ ինքն ալ կասկածված էր իրը շարժման մեղսակից: Այդ կասկածը շատ ուշ կրցակ փարատիլ, և անհրաժեշտ էր ուրիշ նոր կասկած չըբերել վրան:

Օրմանյան ինքն ալ կզբանեն, որ պատասխանատվությունը, որուն կկոչվեր, բան մը փոխանակ էր իր ներսը: Բոլորովին հին Օրմանյանը չէր ա՛ւ, երբ կնստեր Պատրիարքական Աթոռը: Այդ Աթոռը չեկած, հեղափոխականության բարեկամ նկատված: Է՛տ ան, այնպես որ իր ընտրությունը գոհումակոթյամբ ընդունած էին հայ հեղափոխականները: Հայ ծողովուրդի նոր կացությունը, մարգիկը, որոնց հետ պիտի գործեր, արքունիքը, որուն հետ գործ պիտի ունենար, չէին կրնար շփոխել զինքը:

Միակ սեելոյալ գաղափար մը ուներ Օրմանյան՝ կամուրջը անցնիլ: Ու կամուրջը անցնելու համար ճկիլ պետք էր, ու մանավանդ մոռնալ եզերքը, զոր թողած ես ետևող:

«Ինձի նվիրական պարտականություն կսեպեի անցյալ վտանգներուն հետևանքները զարմանել՝ կգրի Օրմանյան, — սորանոր վտանգներու առիթ շտալ, շատ արյուն կորսնցնող ճիվանդը խիստ փորձերու շենթարկել, ինչպես կուտակցականաց հայտնապես ըսած էի, և ժամանակին պահանջած ձևունիքը գործածել, պետական բռնությունները

մեղմել, եթե ու ամբողջական՝ գոնի մասնակի դյուրություններ պատրաստել, ներքին վարչությունը կազմակերպել, նպաստներու ուժ տալ, նոր սերունդը պատրաստել, և հնարավորով գոհանալը⁹⁵:

Նվազ շահեկան չէր գիտնալ, թե ինչպես կվերաբերեր Համբետի գեակի Օրմանյանը: Կըրնանք սկիզբեն իսկ ըսել անվարան, թե Օրմանյան հետզետես ավելի լայն շափով կլայիլեր Համբիդի վստահությունը, որովհետեւ առանց այդ վստահության անկարելի էր, որ ան դիմանար տասներկու տարի Պատրիարքական Աթոռի վրա:

Օրմանյան առաջին անգամ Համբիդի կներկայանար 1896 նոյեմբեր 23-ին, իր ուխտը կատարելե իրք օր հետո: Սովորանը, որ Արթին փաշային տեղեկացած էր Օրմանյանի ատենաբանությունը ուխտը կատարելի հետո և զո՞ն մնացած, պատվավոր ընդունելություն մը կըներ նոր պատրիարքին: «Այդ առթիվ Աթոռով Համբիդ կայսր հայտարարեց, թե պատրիարքի անձին և զգացմանց մասին վստահացուցի տեղեկություններ ստացած էր Պատական խորհրդու նախագահ Սայիդ փաշայի, նոյնինքն Քուրդ Սայիդ մականվայալը, որ Կարին քննիլ եկած էր Օրմանյանի առաջնորդության միջոցին, և թե ինքն իմացած էր, որ գիտնական մեկ մըն է, և համոզված էր, որ գիտնական անձը առաքինի ալ կըլլաց⁹⁶:

Օրմանյան ինքն ալ գիտեր վառ պահել այդ համակրությունը: «Աթոռով Համբիդ կայսր կիրեր միշտ յուր նախաձեռնությամբ գործած իրենալ, քան թե աղերսախառն ձեկի ներքեւ ալ ընելիքը ուրիշե ճշտված կամ առաջարկված գիտնալ, որով գյուտի և նախաձեռնության առավելությունը իրմե կապված կկարծեր: Ուստի ստեղ պատմական կամ հաղորդակցական ոճով գաղափարներ հիայտնի, որոնք կալմէր համնելով անկի իրը յուր սեփական միտքն ու գյուտը կդառնային, կամ թե երրորդներու միջնորդությամբ գաղափարներ հիասցնեի, որոնք ավելի օգտակար կդառնային նպատակին հասնելու⁹⁷:

Համբիդով չէր ավարտեր արքունիքը: Շատ մը պատիկ Համբիներ ալ կային, զորս ևս ստիպված էր հաշվի առնել պալատին հետ գործ ունեցող մը: Թահսին փաշան կար նախ, որ առաջին քարտուղարն էր Համբիդին, հետո կուգային երկրորդ քարտուղար Աթար Իզգեթ փաշան, արարողապես Ռազը փաշան: Ասոնք պաշտոնականներն էին: Թայց այս երեք փաշաններու կողքին կային ուրիշ հզոր մար-

95 «Խոհը և խոսր», էջ 18—19:

96 «Ազգապատմ», Գ, էջ 5075:

97 «Խոհը և խոսր», էջ 260:

դիկ ալ, որոնց վստահած էր Համիդ իր ապահովությունը, իր կանանցը, իր սնապաշտությունները և այլն, և ասոնց բոլորն ալ իրենց արքանցակներն ունեին ներսն ու գուրսը, ուժանք իրենց տերերեն ավելի զարհութելի:

Բայց բոլոր ասոնցմե առավելապես Թահանին փաշան էր, որ Համիդին ու Հայոց կապն էր:

«Արքունյաց հետ հարաբերությունը, — կը սի Օրմանյան, — միշտ առաջին քարտուղար Թահանին փաշայի հետ կատարեի: Կայսեր հետ երես առ երես տեսակցություններ ցանցառ էին, զի Արդու Համիդ շատ վերապահություններ ուներ այդ մասին, և ամենուն հետ ալ բացառիկ պարագաներու կպահեր անձնական տեսակցությունները»⁹⁸:

Իր այդ երես առ երես տեսակցություններն առաջինը իր անդրանիկ ունկնդրության առթիվ էր, 1896 նոյեմբեր 23-ին, Երկրորդ մասնավոր տեսակցություն մը տեղի ունեցած է երեք տարի հետո, 1899 դեկտեմբեր 7-ին, նույն օրվան հավաքական շնորհավորության ուշ հասնելուն առթիվ: Երրորդ առանձին ունկնդրություն մը Համիդ շնորհած է 1903 հոնվար 31-ին՝ Մայր Եկեղեցվու մեջ Օրմանյանի մահափորձի հնթարկվելեն հետո, չորրորդ մըն ալ 1904 սեպտեմբեր 17-ին՝ Խապայան կաթողիկոսը արքունիք ներկայացնելու ատեն:

Իր ծննդյան և գահակալության տարեդարձներուն շնորհակալության եկող հոգևոր պետերը՝ հավաքաբար կընդուներ Համիդ: Անոնք հավաքաբար ներկա կըլլային զանազան առիթներով տրված կոչունքներուն, ինչպես Ռամազանի իֆթարի, իշխանագուններու թիվատության և նման առիթներով:

Թահանին փաշայի հետ ևս հաջոտ երթալ կրցած է Օրմանյան: «Արքունյաց հետ մտերմական հարաբերություններ պահելու, և ամեն գործի համար ծրագր դիմելու հայտնի իրողություն մըն է, և հետևանք Համիդի բռնածքագականության, որ նախարարությունները չեղորացներով ամենայն ինչ պալատան մեջ ամփոփած էր, ուր զանազան ճյուղերու հատուկ հանձնակատարներ որոշված էին իրեր անպաշտոն նախարարություններ, և հայերու վերաբերյալ գործերը Թահանին փաշայի հանձնված էին, և ես ալ ստիպյալ էի անպատճառ անոր դիմել և անոր հետ բանակցիլ: Այս մասին պետք է հայտարաբեմ, թե մեր հարաբերությունները երբեք ստրկական և դիմունները երբեք ստորնաբարը չեղան, այլ տեսակ մը ճարտար և կատակարան ու զվարճաբան ձեւրով համեմյալ, և

անուղղակի թելադրություններով զորացյալ, որոնք ավելի արդյունավոր են տաճկական պաշտոնակալաց հետ»⁹⁹:

* * *

Օրմանյանի կապը թարձրագույն Դուան հետ պաշտոնական միայն եղած է, ու տարբեր ալ չէր կրնար ըլլալ: Թարձրագույն Դուան դեռ երկրորդական էր ինքնին, և պետության բոլոր կարեւոր հարցերը կվճռվեին Ցըլդըլի մեջ՝ Համիդի աշքին տակ: Իսկ նախարարները պարու խամաճիկներ էին լոկ: Այսուհանդերձ անոնց հետ ևս սիրալիր ըլլալ պետք էր, որովհետև անոնց ձեռքեն ալ ի հարկին կրնար շարիք զալ: Իսկուր չէ որ Արևելքը բարիին հետ շարն ալ կպաշատե:

«Նախարարներու հետ սեղմ պաշտոնականն ուրու հարաբերություն չունեցա, և ունենալ ներյալ չէր, նույնիսկ իրենք ալ ժողովներ և պաշտոնատուններ գուրս իրարու հետ չէին կրնար տեսակցիլ»¹⁰⁰:

* * *

Թուրովին ալ ճրի սնապարծություն մը չէ, երբոր Օրմանյան կըսե, թե իր օրով ջարդեր տեղի չունեցան: Խոկավես ալ զանգվածային կոտորածներ չեղան Օրմանյանի պատրիարքության տասներկու տարիներուն:

Անշուշտ որ Օրմանյանի ողոքիլ քաղաքականությունը և Համիդի բնազդները մեղմելու մեջ իր որոշ դերն ունեցավ: Բայց ուրիշ պատճառներ ալ կային, եթե Համիդը այդ շրջանին համեմատաբար ավելի զուսպ պահեց արյան ծարավը իր մեջ: Նախ բանի մը տարի, ցուցական գործունեությունը դադրեցած էին հայ հեղափոխականները իրենք: Սաստինի ապստամբությունը 1904-ին առանց վրիժառության շանցավ սակայն, թեև արյունահղությունը չծավալեցավ ուրիշ շրջաններ: Ցըլդըլի ուումբը, 1905-ին, զարդի տեղի շտվակ պարզապես այն պատճառվ, որ մափորձն շարաթներ հայունի հայտնի դարձավ, որ հայերու գործն էր «անիծապարտ արարքը»: Եվ վերշապես Համիդ ուրիշ պատճառներ ալ ուներ զուսպ մնալու: Մակեղոնիո խնդիրը բռնկած էր և Համիդ կվախնար ուրիշ պատրվակներ ալ տալու Եվրոպային: Իսկ մյուս կողմէ «Երիտասարդ-թուրք» շարժումը Համիդի վերջին տարիներուն՝ արդեն սպառնական բնույթ մը ստացած էր, պայմելու հարմար բռպես փնտուելով և հետևաբար իր որդին մեջ զգաստ պահելով բռենին:

Այս բոլորով մեկտեղ Օրմանյան ինքն ալ իր կարգին զուսպ պահել գիտցավ Համիդը, ինչպես որ կրցավ շշփթիլ երբոր լարին վրա կխաղար...»:

⁹⁹ Անդ, էջ 259:

¹⁰⁰ Անդ, էջ 268: